

**Երևանի ավագանու
«Բարգավաճ Հայաստան» խմբակցության
ղեկավար տիկին Թ. Պողոսյանին**

Հարգելի տիկին Պողոսյան.

Ի պատասխան Ձեր 24.10.2013թ. հ.54/77 գրության, հայտնում եմ, որ 2009 թվականի փետրվարի 10-ին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի /այսուհետ՝ Լիազոր մարմին/ և «Դաունթաուն Երևան» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքվել է սեփականության օտարման գործընթացի ընթացքում պետության և ձեռքբերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանող պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/: Լիազոր մարմնի կողմից պայմանագրի 3 հոդվածով /գլխով/ սահմանված պարտականությունները /աշխատանքները/ կատարվել են ամբողջությամբ: Պայմանագրի այլ կետերով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները իրականացվել են մասամբ: Պետությունն իր պարտավորությունները կատարել է պատշաճ՝ ձեռքբերողի կողմից օրենքով սահմանված կարգով համապատասխան հայտի կամ դիմումի առկայության պարագայում: Պայմանագրի, ՀՀ կառավարության 01.03.2007թ. հ.347-Ն և 19.02.2009թ. հ.168-Ն որոշումների շրջանակներում ընկերության կողմից կնքվել է շուրջ 200 օտարման պայմանագրեր:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի «Երևան քաղաքի Կոնդ թաղամասում որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու իրավական ռեժիմն օրենքի ուժով վերանալուց բխող միջոցառումների մասին» N1237-Ն որոշմամբ տարածքում ընդգրկված, սակայն չիրացված անշարժ գույքերի նկատմամբ նախկինում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետ կապված սահմանափակումները վերացել են: Նույն որոշման համաձայն «Դաունթաուն Երևան» փակ

բաժնետիրական ընկերությունն իրացված, սակայն չքանդված 70 միավոր անշարժ գույքերի մասով լուծելու է իրացման պայմանագրերը և անշարժ գույքերը սեփականության իրավունքով անհատույց օտարելու է նախկին սեփականատերերին՝ իր հաշվին կրելով գործարքների նոտարական վավերացման և ստացողի իրավունքների կադաստրային գրանցման ծախսերը: Արդեն իսկ իրացված /քանդված/ անշարժ գույքերի սեփականատերերի մասով «Դաունթաուն Երևան» փակ բաժնետիրական ընկերության ստանձնած պարտավորությունները փոխանցվել է «Դաունթաուն Երևան» փակ բաժնետիրական ընկերությունից առանձնացման եղանակով ստեղծված «Դիվելոփմենթ Սուփորթ» ՓԲ ընկերությանը:

Ներկայումս տարածքում քաղաքաշինական ծրագիր պետք է իրականացվի «Դիվելոփմենթ Սուփորթ» ՓԲ ընկերության կողմից միայն Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարող 26.000 քմ մակերեսով հողատարածքում:

Ինչ վերաբերում է Կոնդ թաղամասի հիմնական տարածքի կառուցապատման խնդիրներին, ապա 2013 թվականին «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի պատվերով մշակվում է թաղամասի կառուցապատման հայեցակարգը:

2014-2017 թվականներին Երևանի զարգացման քառամյա ծրագրով նախատեսվում է Կոնդ թաղամասի կառուցապատման էքսիզային նախագծի մշակումը:

Կից ներկայացվում է պայմանագրի պատճենը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ